ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

---

«24» դեկտեմբերի 2018թ. № Ա2/895-Ա

# ՀՐԱՄԱՆ

## Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 21-րդ կետի 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 55/2018 եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Ներքին անվտանգության վարչության 1-ին բաժնի պայմանագրային հիմունքներով աշխատող անցագրային կետի հերթապահ Հակոբ Հովհաննիսյանին հայտարարել նկատողություն:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին՝ սույն հրամանը իրազեկել ողջ անձնակազմին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Է.ԳԵՎՈՐԳՅԱՆ

????? ????????